

Պատրաստ է արդյոք Հայաստանը լիարժեք դիմակայելու թրաֆիքինգին

/ շարնդություն 2 /

Մարդկանց շահագործման հիմնախնդիրը ահագնացող պորբլեմ է 21-րդ դարում: Այն արդիական խնդիր է նաև ՀՀ-ի համար: Իսկ պատրաստ է արդյոք Հայաստանը լիարժեք դիմակայելու թրաֆիքինգին. կարևորը սա է:

Իմ կարծիքով, թրաֆիքինգը ծանր «հիվանդություն» է, որը հիմնականում առաջանում է խղճի խայթից, կարեկից լինելու հատկություններից զուրկ անհատների մոտ: Իսկ եթե կա հիվանդություն, փնտրում, գտնում են ինչպես նրա առաջացման պատճառները, այնպես էլ բուժման եղանակներն ու միջոցները: Եթե կան միջոցը, ձևը, ապա դրանք գործի դնողները պիտի լինեն գիտակից անձինք:

Սրանից մեկ-երկու տարի առաջ ես ու իմ հասակակիցները չգիտեինք որ թրաֆիքինգը շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելն է, տեղափոխելը, պարտակելը, որոնք արվում են սպառնալիքի, հարկադրանքի, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանության չարաշահման միջոցներով: Իսկ հիմա գիտենք և գիտակցում ենք դրա ահավորությունը: Ինչ, ուրեմն, գիտակցելով հանդերձ, թույլ տանք, որ այն մուտք գործի նաև մեր միջավայր: Իսկ ինչու՞ են այսքան աշխատանքներ տարվում տարբեր կազմակերպու

թյունների կողմից. նպատակը մարդկանց իրազեկելն է, նրանց զինելը գիտելիքներով, փորձով: Եթե Միգրացիայի Միջազգային Կազմակերպությունը, Հայ Օգնության Միությունը իրենց կարևորագույն աշխատանքներից մեկը համարում են անմիջական աջակցությունը թրաֆիքինգի զոհերին, ուրեմն հիվանդության առաջն առնված է, բնակչության շրջանում անցկացվում են « պրոֆիլակտիկ պատվաստումներ»: Բազմաթիվ ֆիլմեր ենք դիտել, հոդվածներ կարդացել, քննարկել թրաֆիքինգի զոհերի մասին՝ Կարոն, Մարիամը, բագրատաշենցի 15-ամյա ելենը ... ախր նրանցրոջ ոչ մեկը նախապես չի իմացել իր հետագա ճակատագիրը, իր անելիքը: Սոցիալապես անապահով վիճակ, գործազրկություն, աղքատություն... Դրանց կողքին՝ բարձր վարձատրվող աշխատանք, բարեկեցիկ ապրելակերպ, ուսում, արտասահմանյան շքեղություն, լավ անուսին... Սին խոստումներ... Արդյունքում մարմնավաճառություն, օրգանների կորզում, ծանր ֆիզիկական աշխատանքի հետևանքով ողնաշարի վնասվածքներ, սիրտ-անոթային անբավարարություն: Իսկ հետդարձից հետո՝ հոգեբանական լուրջ խնդիրներ՝ վախ, սարսափ, հոգեկան ցնցումներ, մարդկանց նկատմամբ անվստահություն: Ինչու թույլ տանք, որ թրաֆիքինգի շրջապատույտ լինի: Չէ՞ որ դրանք հիմնականում իրազեկված չլինելու պատճառով են եղել: Իսկ հիմա, փառք աստժո, համապատասխան կազմակերպությունները ամեն ինչ անում են՝ որքան հնարավոր է շատ մարդկանց, շատ հիմնարկ-ծեռնարկությունների աշխատողների, ուսանողների, դպրոցականների ընդգրկել կազմակերպվող սեմինար-պարապմունքներում, նրանց հետ անցկացնել գործնական պարապմունքներ, դերային խաղերի միջոցով քննարկել տարբեր իրավիճակներ և գալ եզրահանգման՝ այն է՝ դիմակայել թրաֆիքինգին և օգնել հեշտացնելու թրաֆիքինգի զոհերի վերականգնումը: Դպրոցում՝ դասղեկի ժամերին, հաճախ ենք զրուցում այս ցավոտ հարցերի շուրջ, կարդում ու քննարկում ենք մարդկանց՝ հատկապես կանանց ու երեխաների թրաֆիքինգի կանխարգելման, արգելման և պատժի մասին արձանագրությունները: Գիտենք, որ հանցագործը քրեորեն պատժվում է: Եթե «զոհը» իր համաձայնությամբ է գնացել, դա չի նշանակում, որ հանցագործը չպիտի պատժվի: Ոչ մեկը իրավունք չունի ոտնահարելու ուրիշի ապրելու, սովորելու, աշխատելու իրավունքը, նսեմացնելու նրա արժանապատվությունը: Եթե մեզնից յուրաքանչյուրը օգնի իրեն շրջապատող մարդկանց՝ հանդես բերելու ավելի տեղեկացված գործելակերպ ու գործուն վարք, իսկ արդեն իսկ «զոհե չի» նկատմամբ ցուցաբերի մարդասիրական ու հանդուրժողական վերաբերմունք, ապա մեր երկիրը կարող է դիմակայել թրաֆիքինգին: Ես համոզված եմ՝ կգա ժամանակ, որ թույլը ուժեղի զոհը չի դառնա, հուսով եմ, որ բարեգործությունն ու ողորմածությունը երբևէ գերիշխելու են մարդկային հոգիներում, և մոլորակի իշխանը լինելու է խիղճը, իսկ գերագույն դատավորը՝ խղճի խայթը: Կգա ժամանակ, որ դպրոցի 11-րդ դասարանցիս չի մտածի, թե ինչ ասել է թրաֆիքինգ, չի մտածի ցավածին մխիթարելու, չարին սաստելու, վիատին ամոքելու մասին, այլ կմտածի. «Ինչ լավ է, որ հայ եմ, ինչ լավ է, որ Հայաստանում եմ ապրում...»

Անալյա Մարգարյան 11-րդ դասարան Տավուշի մարզ, Նոյեմբերյանի թիվ 2 միջն. դպրոց